ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Էլմիրա Արմենի Վարդանյանի «Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները» թեմայով ԻԴ. 03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության ներկայացված ատենախոսության արդիականությունը:

Աշխարհագրական միջավայրի վրա մարդածին գործոնների ազդեցության արդի պայմաններում էկոլոգիապես հիմնավորված բնօգտագործման կազմակերպումն ու տարածքային պլանավորումը բնության և հասարակության փոխհարաբերությունների կարգավորման ու կայուն զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է:

Մարդածին ներգործության նկատմամբ հատկապես խոցելի են լեռնային լանդշաֆտները, որտեղ առավելագույն չափով են դրսևորվում և ցայտուն են արտահայտվում տեխնածին գործոնների ազդեցությունն ու դրա անցանկալի հետևանքները: Հետևաբար, արդյունավետ բնօգտագործման էկոլոգիական ասպեկտները ենթադրում են լեռնային լանդշաֆտների ժամանակակից վիճակի, դրանց արտադրական ներուժի և մարդածին փոփոխությունների համալիր ուսումնասիրություն, գիտականորեն հիմնավորված գնահատում, բնօգտագործման ձևերի արդյունավետ պլանավորում, բնապահպանական միջոցառումների և էկոլոգիական բարելավման նպատակային ուղիների մշակում:

Այդ իմաստով, Էլմիրա Վարդանյանի ատենախոսական աշխատանքն, անշուշտ, արդիական է, իսկ հեղինակի հետազոտություններն ունեն պրագմատիկ հնչերանգ, կառուցողական և պրակտիկ-կիրառական նշանակություն:

Հետազոտությունների հիմնական նպատակը և առաջադրված խնդիրները:

Ատենախոսական աշխատանքն ունի հստակ կանխորոշված նպատակային ուղղվածություն և վերաբերում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի լեռնային լանդշաֆտների արդի վիճակի և մարդածին փոփոխությունների համալիր գնահատման ու էկոլոգիական բարելավման հիմնախնդիրներին:

Ատենախոսն իր արջև խնդիր է դրել տարածաժամանակային մոտեցման սկզբունքով նախ բացահայտել և վերլուծել Տավուշի մարզի լեռնային լանդշաֆտների զարգացման և փոփոխությունների բնամարդածին գործոնները, ԱՏՀ քարտեզաչափական գործիքակազմի կիրառմամբ վերլուծել լանդշաֆտային գոտիների մարդածին ծանրաբեռնվածության աստիճանն ու բաշխվածությունը, ապա նաև՝ լանդշաֆտային պլանավորման սկզբունքների կիրառմամբ՝ մշակել լանդշաֆտների արդի վիճակի էկոլոգիական բարելավման հուսալի ուղիներ:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունն աչքի է ընկնում իր կուռ կառուցվածքով. բաղկացած ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից (130 անուն) և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր

ծավալը 126 համակարգչային էջ է (առանց հավելվածի): Այն պարունակում է նաև աղյուսակներ, նկարներ և քարտեզներ:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է հետազոտության արդիականությունը, ներկայացրել է ուսումնասիրության նպատակն ու դրանից բխող խնդիրները, գիտական հետազոտությունների օբյեկտն ու առարկան, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ելակետային նյութերը, հետազոտության գործնական նշանակությունը, փորձաքննությունը:

Առաջնորդվելով աշխարհագրական հետազոտություններում կիրառվող համակարգային մոտեցման սկզբունքով՝ դրված հիմնախնդիրների լուծման նպատակով հեղինակն օգտագործել է տարածաժամանակային վերլուծության, գեոէկոլոգիական, երկրատեղեկատվական մետեցումները, աշխարհագրական-համեմատական վերլուծության, քարտեզագրական, ԱՏՀ տեխնոլոգիաների հետազոտական, էկոլոգիական փորձաքննության մեթոդները: Դաշտային և լաբորատոր հետազոտություններում շեշտը դրվել է ուսումնասիրվող երևույթների տարածաժամանակային և տնտեսաէկոլոգիական ասպեկտների վրա:

Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է Տավուշի մարզի լանդշաֆտային գոտիների և դրանց բնամարդածին փոփոխությունների հնէաաշխարհագրական վերլուծությանը: Այստեղ հեղինակը, հիմնավորելով մարզի լանդշաֆտները՝ որպես բնահասարակական գեոհամակարգեր, ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է լանդշաֆտների ուսումնասիրության արդի վիճակին, դրանց էկոլոգիական առանձնահատկություններին և բնամարդածին փոփոխությունների հնէաաշխարհագրական վերլուծությանը:

Հեղինակի գիտական ուսումնասիրություններն ուղղված են գլխավորապես բնալանդշաֆտային միջավայրի առավել խոցելի երկրահամակարգերի՝ անտառային բնատարածքային համալիրների վրա: Ատենախոսը միայնգամայն իրավացի է, նշելով, որ բնամարդածին գործոնների ազդեցությունը հատկապես ցայտուն է դրսևորվում անտառային երկրահամակարգերում և արտահայտվում է կլիմայի արիդացման ընդհանուր ֆոնի ներքո անտառների տարածման վերընթաց սահմանների և զբաղեցրած մակերեսների փոփոխությամբ (ունեն սեղմման և կրճատման միտում), դրանց բնամարդածին սուկցեսիոն երևույթներով, քսերոֆիլ հետանտառային համակեցությունների տարածմամբ:

Աշխատանքի առաջին գլխի տրամաբանական շարունակությունն է կազմում *երկրորդ* լանդշաֆտների փոփոխությունները բնութագրող ցուցչային գործոնների վերլուծությանը նվիրված *գլուխը*: Որպես այդպիսին՝ հեղինակը մատնանշում է անտառածածկ տարածքի և անտառի տեսակային կազմի, դրանց սահմանագծերի փոփոխությունները, անտառի ֆրագմենտացիան, ինչը իրոք վկայում է անտառային երկրահամակարգերի դեգրադացիայի և ոչնչացման վտանգի մասին:

Աշխատանքի երրորդ գլուխը վերաբերում է Տավուշի մարզի հողօգտագործման վիճակի և, ընդհանրապես սոցիալտնտեսական զարգացման վերլուծությանը: Հեղինակն առանձին ենթագլուխներով ներկայացնում է տարաբնակեցման համակարգի, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի ազդեցությունը լանդշաֆտային գոտիների վրա:

Ատենախոսական աշխատանքում առանցքային ենք համարում *չորրորդ* «Տավուշի մարզի լանդշաֆտների էկոլոգիական բարելավման ուղիները՝ լանդշաֆտային պլանավորման գործիքի կիրառմամբ» *գլուխը:* Հիմնվելով լանդշաֆտային պլանավորման սկզբունքային հիմնադրույթների վրա հեղինակը փորձել է բացահայտել պրակտիկ-կիրառական մի շարք կառուցողական հիմնախնդիրներ՝ կապված կոնկրետ լանդշաֆտներում հասարակական կյանքի կազմակերպման, տարածքի տնտեսական օգտագործման ձևերն ու եղանակները՝ միջավայրի բնաէկոլոգիական և լանդշաֆտային հորինվածքին առավելագույն չափով հարմարեցման, նպատակային օգտագործման և հարմարավետ ու էկոլոգիակես հավասարակշռված բնամարդածին համալիրների ստեղծման հիմնահարցերի հետ:

Աշխատանքի չորրորդ գլխում ատենախոսը կատարել է ըստ վերընթաց լանդշաֆտային գոտիների հողօգտագործման գործընթացի, լանդշաֆտների անթրոպոգեն ծանրաբեռնվածության, դրա աստիճանի և էկոլոգիական լարվածության համալիր վերլուծություն ու գնահատում:

Ողջունելի է և ուշագրավ բնական լանդշաֆտների մարդածին փոփոխությունների, դրանց հետևանքների և անթրոպոգեն ծանրաբեռնվածության աստիճանի բացահայտման, վերլուծության և գնահատման աշխատանքներում հեղինակի կողմից կիրառված տարածքային *տնտեսաէկոլոգիական հաշվեկշռի եղանակը,* որը թույլ է տվել կազմել ուսումնասիրվող բնատարածքի անթրոպոգեն ծանրաբեռնվածության կիրառական քարտեզ:

Առանձնահատուր կարևորություն ենք վերապահում աշխատանքի **4.3** ենթագլխին, որում հեղինակը կատարել է մարզում առկա բնամարդածին կոնֆլիկտների բացահայտում, լանդշաֆտների էկոլոգիական վիճակի գնահատում և դրա բարելավմանն ուղղված գործողությունների ու միջոցառումների մշակում և քարտեզագրում:

Կատարված ատենախոսական աշխատանքն արժեքավոր է ինչպես գիտական ու մեթոդաբանական, այնպես էլ պրագմատիկ-կիրառական տեսանկյուններից:

Վերը հիշատակված առավելությունների հետ մեկտեղ աշխատանքում, մեր կարծիքով, կան որոշ թերություններ, բացթողումներ, որոնց պարզաբանումն ու պատասխանները ակնկալում ենք լսել պաշտպանության ընթացքում.

1. Ատենախոսության սեղմագրում առկա են ոճական և խմբագրական որոշ թերություններ.
2. Մեր կարծիքով, հեղինակի եզրակացությունները փոքր ինչ ծավալուն են, ինչի պատճառով դրանց բուն էությունը թույլ է արտահայտված: Նպատակահարմար կլիներ, եթե դրանք ունենային ավելի կոնկրետ ձևակերպում:
3. Կատարված հետազոտության պրակտի-կիրառական արժեքն էլ ավելի կաճեր, եթե հեղինակը տարածքային տնտեսաէկոլոգիական հաշվեկշռի եղանակով լանդշաֆտների մարդածին ծանրաբեռնվածության գնահատման վերջնարդյունքում փոփոխվածության գործակցային մեծությունների հիման վրա կատարեր նաև ըստ փոփոխվածության աստիճանի մարզի բնամարդածին երկրահամալիրների դասախարգում:

Սակայն մեր կողմից արված դիտողությունները ամենևին չեն ազդում հետազոտության արժեքի և այն գնահատականի վրա, որով աչքի է ընկնում սույն աշխատանքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էլմիրա Արմենի Վարդանյանի հետազոտության արդյունքներն ունեն գիտատեսական և պրակտիկ-կիրառական նշանակություն: Կատարված եզրակացություններն ու առաջարկությունները հիմնավոր են, արդիական և իրատեսական:

Հրատարածված հոդվածները լիարժեք ընդգրկում են ատենախոսության նյութը: Աշխատանքը հագեցած է ուշագրավ աղյուսակներով ու քարտեզներով, որոնք էլ ավելի են մեծացնում դրա արժեքը:

Հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները, կատարել լուրջ, գիտնականին վայել հետազոտություն և ներկայացնել պատշաճ մակարդակի գիտական աշխատանք, որտեղ երևում են հիմնախնդրի վերաբերյալ հեղինակի սեփական դատողությունները, վերլուծական միտքն ու տրամաբանական եզրահանգումները:

Աշխատանքում առկա թերությունները սկզբունքային չեն և, ամենևին, չեն ազդում դրա որակի վրա:

Գտնում ենք, որ Էլմիրա Արմենի Վարդանյանի «Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ԻԴ. 03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ թվանիշին, բավարարում է Հայաստանի Հանրապետության ԲՈԿ-ի թեկնածուական թեզերին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Աշխարհագրական գիտությունների

թեկնածու, դոցենտ Մարինե Մաթոսյան

Դոցենտ Մարինե Մաթոսյանի մակագրությունը հաստատում եմ

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի

գիտ. քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Մարիամ Իսպիրյան

07.09.2023